



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 20 ՅՈՒՆԻԱՐ, 2014

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ԻՍՏԱՏՈՒԹԻՒՆ ՍՈՂՈՍՈՒՆԻ 9

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՄԱՐԴՈՒՆ

Ո՞ր մարդը կրնայ իմանալ Աստուծոյ խորհուրդները,
եւ կամ ո՞վ կրնայ խելամուտ ըլլալ, թէ ինչ կը կամենայ Տէրը.
որովհետեւ մահկանացուներուն մտածումները անստոյգ են,
իսկ մեր գիտելիքները՝ անհաստատ:
Եղծանելի մարմինը կը ծանրացնէ հոգին,
եւ հողեղէն այս յարկը բազմահոգ կը դարձնէ միտքը:
Ուստի մենք հազիւ թէ նկատենք երկրային բաները
եւ չարչարանքներով կը գտնենք գայն:
Իսկ այն ինչ որ կը գտնուի երկնքի մէջ, ո՞վ կրնայ բնել,
եւ ո՞վ կրնայ գիտնալ քու խորհուրդներդ,
եթէ դուն իմաստութիւն չտաս,
եւ քու Սուրբ Հոգիդ չդրկես քու բարձրումներէդ:
Այսպէս է որ երկրայինները ուղղեցին իրենց շաւիղները
եւ սորվեցան այն ինչ որ հանելի է քեզի
եւ փրկուեցան քու իմաստութեամբդ:

ՆԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՅԱԿՈՒԲԻՆ ԶԱԲԱԿՆԵՐ ԿԸ ԾՆԱՆԻՆ (29:31-35, 30:1-24)

«Տերը, երբ Լիային արելի ըլլալը տեսաւ, անոր արգանդը բացաւ, բայց Ռաբէլ ամուլ էր» (29:31): Ընդհանրապէս Աստուածաշունչին մէջ բառեր կան, որոնք քիչիկ մը կրնան փարօրինակ թուիլ, սակայն, պէտք է որ ծանօթ ըլլանք անոր բառապաշարին, որպէսզի կարենանք ճիշդ հասկնալ այդ բառերուն իմաստը: Ահաւասիկ այդ բառերէն մէկն է «արելի», որ կը նշանակէ շար ատելի քիչ սիրելի: Ինչպէս պիտի ըսէ Քրիստոս. «Ով որ կ'ուզէ ինձի գալ, բայց չար է իր հայրն ու մայրը, կ'ինը եւ զաւակները» (Ղուկ 14:26): Ուրեմն հարցը արելութեան մասին չէ այնքան որքան ատելի քիչ սիրելուն: Նոյնպէս ալ Յակոբ Ռաբէլը շար ատելի սիրեց քան Լիան: Երկրորդ, ամուլ էր: Ամբողջութեան պարագան, մանաւանդ Աստուածաշունչին մէջ, իր յարուկ իմաստը ունի, որ կապուած է գալիք ճշմարտութեան, որ այս պարագային Եկեղեցին ինք պիտի ըլլար այդ ամուլը, որ սակայն յետոյ բազում զաւակներ պիտի շնորհէր: Այսպէս սակայն Աստուածային իմաստութիւնն է որ կը գործէ, որպէսզի հաւասարակշռէ երկու քոյրերուն միջեւ մէկու մը գեղեցկութիւնը, բայց ամուլ, միւսին նուազ սիրուած ըլլալը, բայց պարտասար որդեծնունթեամբ:

Լիա Յակոբի չորս զաւակներ կը ծնանի՝ Ռուբէն, Շմաւոն, Ղեւի եւ Յուդա: Իրաքանչիւրին փրուած անուրը, մանաւանդ անցեալի հասկացողութեամբ, ունի իրեն յարուկ նշանակութիւն մը: Այդ անունները պարահական չեն, այլ նաեւ ցոյց կու տան կամ կը յիշեցնեն դէպք մը, պարահար մը, որուն հիման վրայ կ'որոշուի անունը: Միւս կողմէ կայ նաեւ կարծէք մրցակցութիւն մը երկու քոյրերու միջեւ, թէ ով որքան զաւակներ պիտի ծնանի:

Ահա այս միջոցին է երբ Ռաբէլ զաւակ չ'ունենար, կը դիմէ Յակոբին բարկութեամբ ըսելով. «**Ինձի զաւակներ քուր, եթէ ոչ կը մեռնիմ**»: Բայց Յակոբ կը պարասխանէ. «**Միթէ ես Աստուծոյ տէրն եմ**»: Ռաբէլ կարծէք իր մտքին մէջ ունէր այն վիճակը, թէ ինչպէս Աբրահամ խնդրեց Աստուծմէ որ Սարան ծնանի, Յակոբ եւս աղպէս պէտք էր ընէր: Բայց Յակոբ անմիջապէս կու գայ ըսելու եւ մարմանշելու, թէ Աստուած միակ ինքն է որ կրնայ այդ ընել, որովհետեւ ինքն է Աբրահիմը, ու մանաւանդ կեանքի փութիւնը: Թէեւ Յակոբ բարկութեամբ կը պարասխանէ, բայց միեւնոյն ժամանակ իմաստութեամբ:

Ահա այն արեւն Ռաբէլ իր աղախինը՝ Բաղդան կու տան Յակոբին կնութեան, որպէսզի անկէ զաւակ ծնանի, թէեւ Յակոբ Լաբանին մօտ եկած էր նոյն գերդաստանէն առնելու, բայց հիմա ահաւասիկ Ռաբէլի արօնութեամբ աղախինէն ալ զաւակ կ'ունենայ: Այս պարագն կը բացաբարուի թէ ինչպէս աղախինէն ծնաններն ալ պիտի ժառանգորդ դառնան Աստուծոյ պարտասարած արքայութեան: Տակաւին նոյն արարքը Լիա ինք եւս կ'օգտագործէ իր աղախինէն ալ փառու Յակոբին որպէսզի անկէ ալ զաւակներ ծնանի:

«**Եւ Աստուած յիշեց Ռաբէլը ու Աստուած լսեց անոր աղօթքը եւ անոր արգանդը բացաւ**»: Հեքաբրքական արքայայտութիւն մըն է, որ յարուկ է Աստուածաշունչին մէջ, եւ կապուած է Աստուծոյ գործելակերպին: «Աստուած յիշեց իր ուխտը» (Ելից 2:24): Այսպէս յիշեցը, ոչ թէ մոռցեր էր, այլ կը նշանակէ հասաւ յարմար ժամանակը: ուրեմն ամէն ինչ իր յարմար ժամանակը ունի, որ պէտք է սպասել այդ յարմար ժամանակին: Այնպէս ինչպէս Պօղոս Առաքեալ պիտի ըսէ. «Եւ Աստուած յարմար ժամանակին իր միածին Որդին դրկեց աշխարհ»: Միւս կողմէ, հեքաբրքականօրէն, Ռաբէլ աւարտին է որ կը սկսի զաւակներ ծնանիլ:

ՅԱԿՈՒ ԼԱԲԱՆԻՆ ՀԵՏ ԿԸ ՍԱԿԱՐԿԷ (30:25-43)

Ահա հասաւ պահը, որպէսզի Յակոբ հեռանայ Լաբանի մօտէն, բայց Լաբան պիտի չուզէ, որովհետեւ Յակոբի ներկայութիւնը օրհնութիւնն էր, անոր Աստուած օրհնած էր Լաբանին: Ուստի կարծէք եթէ երբեք Յակոբ հեռանար կարծէք օրհնութիւնն ալ կրնար հեռանալ: Բայց Յակոբ անպայման կ'ուզէ հեռանալ, որովհետեւ այդ հեռացումը կը նշանակէ ազատութիւն: Նոյնպէս ալ Քրիստոս ինք եկաւ որպէսզի մեզ ազատագրէ մեղքի սարկութենէն. «Ես ձեզ զարեցի այս աշխարհէն, ուրեմն դուք այս աշխարհին չէք պարկանիր»: Զարել կը նշանակէ ընտրել, նաեւ հեռացնել, անջարել: